



## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

### ԿՈՄԻՏԱՍԻ ԱՐԽԻՎԱՑԻՆ ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐԸ

**Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Արվեստի Պատմության և Տեսության Սենյակում Փարզից Կոմիտասյան Ընկերությունից ստացել է Կոմիտասի արխիվային նոր նյութերը, որոնք բովանդակում են երաժշտության տեսական հարցերին վերաբերող գիտա-հետազոտական աշխատանքների մի շարք սևագրություններ՝ այդ թվում՝ Հայկական ձայնախաղեր, ժողովրդական երգեր, որոնք Կոմիտասը գրի է առել ժողովրդից և գրել Հայկական նոտաներով։ Արխիվային նյութերում կան լարային կվարտետի համապատական սենյական համարակալիքներ, ուստի այս սարի հանձնվելու են տպագրության,**

գրված զանազան կտորներ, Կոմիտասը մտադիր է եղել գրել Հակոբ Պարոնյանի «Թաղաքավարության լնաւները» կոմիտական օպերան։ Ստացված արխիվային նյութերի մեջ կան այդ օպերայի մի քանի հատվածների սևագրությունները։

Այժմ արվեստի վաստակավոր գործիչ Մ. Աղայանը հայկական նոտաներով գրված ժողովրդական այդ երգերը վերածել է ելորդական նոտաների։ Ավելի քան 100 ժողովրդական մեներգներ այս սարի հանձնվելու են տպագրության,

### ԱՐԺԵՔԱՎՈՐ ՀԱՅՏԱՐԵՐՈՒՄ

**Հայկական ՍՍՌ Ժողովրդական Ստեղծագործության Տոմսը վերջին ճեղք է բերել Հայ ժողովրդական հին երգերի 1883 թվին կազմված ճեղքագիր մի ժողովածու։ Ժողովածուի մեջ տեղ գտած երգերը**

100-ից մինչև 500 տարվա հնություն ունեն։ Նրանց մի մասը մինչև այժմ բոլորովին անհայտ է եղել, ժողովածուն պարունակում է պատմական, լիրիկական, խմբային, հարսանիքի, պարի և այլ երգեր։

### ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

**Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պետական Պատմական Թանգարանի աշխատակիցները պատրաստվում են Հայ ժողովրդի պատմությանը, նրա կուտարային և ոռա մեծ ժողովրդի հետ ունեցած եղբայրական բարեկամությանը նվիրված ցուցահանդեսի բացմանը։ Թանգարանի դահլիճներում ցուցադրված են նոր էքսպոզատներ— Արգնիում և Բողոքիում կատարված պեղումների (պալեոլիտ և նեոլիտ) ընթացքում հայտաբերված քարի գործիքներ (կայծքարից ու օբսիդիանից շինուած), նախարարատական ժամանակաշրջանի իրեր ու զարդեր՝ ոսկրից, քարից, բրոնզից ու երկաթից պատրաստված, ուրարտական շրջանի զինքեր, անոթներ ու այլ իրեր։**

**Ցուցահանդեսում հատուկ բաժին է հատկացվում Հայ և ոռա ժողովրդների բարեկամությանը։ Այստեղ ցուցադրված են 1887**

թվի ոռա-պարսկական պատերազմի ժամանակ ոռա զորավարների հրամանատարության տակ գործող հայկական զորամասերի գրուակները։ Աչակրության արժանի է ուսուաների կողմից նրանի բերդի առումն ու ազատագրումը, թայբուրդում ու երգումի տեղի ունեցած մարտերը և ոռա զորքի կողմից Ղարսի գրավումը պլատկերող մարտանկարային քանդակների սերիան։ Ցուցահանդեսում կարելի է տեսնել նաև ծրան քաղաքի բանալին, որը պարտված բերդի բերդապետը հանձնել էր գեներալ Պասկելիչին։

Այս բաժնում ցուցադրվելու են Ռուսատանի Հայ զաղովների կյանքին վերաբերող նյութեր, Ռուսաստանում հրատարակված հայերին գրքերը, ինչպես նաև Մոսկվայի արևելյան լեզուների լազարյան ճեմարանին վերաբերող նյութերը։ Ցուցահանդեսը բացվելու է մայիսի 1-ին։

## ՆԿԱՐԻՉ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Հայ խոշոր նկարիչ Հմայակ Հակոբյանը ապրել և ստեղծագործել է Թբիլիսիում: Նա իր ստեղծագործությամբ պատկանում է ռեալիստական ուղղությանը, ունի մի շարք լավագույն գործեր—պելազմներ, նատյուրմորտեր և հատկապես կենցաղային նկարներ: Նրա գործերում աշքի են ընկնում հայ, վրացի, տղթքաջանցի գեղջկութիների նկարները ամենօրյա աշխատանքի ժամանակ,

կամ նրանց առանձին պորտրեները:

Այժմ՝ Հայկական Պատկերասրահը ձեռք է բերել Հ. Հակոբյանի գործերից ավելի քան 150 էքսպոնատ:

Ազրիկ վերջերին բացվելու է Հ. Հակոբյանի աշխատանքների հետմանվան ցուցահանդեսը, որով հայ հասարակախությունը կծանոթանա իր լավագույն նկարիչներից մեկի աշխատանքներին:

## ՊԱՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԵՎ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐԻ ՀԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1947 թվի դեկտեմբերին Մոսկվայում կազմակերպվեց պատանի նկարիչների և քանդակագործների համամիութենական ցուցահանդես, որը նվիրված էր Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի 30-ամյակին:

Հայաստանի պատանի ստեղծագործները ցուցահանդես էին ներկայացրել 96 նկար: Ցուցահանդեսում առաջնությունը տրվեց

ՌՍՖՍՌ-ին, իսկ երկրորդ տեղը Հայկական ՍՍՌ-ին:

Անհատական առաջին կարգի մրցանակ տրվեց նունե Ստեփանյանին (Երևանի Պուշկինի անվան դպրոց), երկրորդ կարգի մրցանակ՝ Յելիսա Հակոբյանին (Երևանի Շիրվանզադեի անվան դպրոց) և երրորդ կարգի մրցանակ՝ Կիրովականի № 4 դպրոցի աշակերտ Դմիտրի Պանասովին:

## ՊՈՌՇՅԱՆԻ ՔԱՆԴԱՐԱՆԸ

Աշտարակում գտնվող այն տոմսը, որտեղ 1837 թվի հունիսի 3-ին ծնվել է հայ անվանի կրող և մանկավարժ Պերճ Պոռշյանը, վերածվել է Տուն-թանգարանի: Անհրաժեշտ վերանորոգումից հետո այդ տունն ընդունել է այն տեսքը, ինչպիսին որ նա ուներ հարյուր տարի առաջ:

Թանգարանում հավաքվել են Պերճ Պոռշյանի կյանքն ու գրական գործունեությունն արտացոլող տասնյակ իլլուստրացիաներ, լուսանկարներ ու փաստաթղթեր: Նկարիչ Վ. Կասյանը պատրաստել է Պոռշյանի «Հացի» խնդիրը, «Մոս և Վարդիթեր», ու այլ երկերից վերցված թեմաների հիման վրա նկարներ:

Թանգարանում դրված են Պոռշյանի երկերը՝ «Մոս և Վարդիթեր», «Հացի խնդիր», «Ճեցեր», «Ճոճոն» և այլն:

Թանգարանում դրված են նաև Պ. Պոռշյանի գրանիտյա կիսանդրին, որը պատրաստել

է քանդակագործ Ս. Ստեփանյանը, Պոռշյանի ուսուցիչ Խաչատուր Արովյանի նկարը, ինչպես նաև Միքայել Նալբանդյանի, Հովհաննես Բումանյանի, Ղազարոս Աղայանի, Ալեքսանդր Շիրվանզադեի, Ավետիք Խաչակրյանի և Հակոբ Հակոբյանի հուշերի և կարծիքների տեքստերը Պոռշյանի մասին:

Էքսպոնատների մեջ կա նաև Ս. Օստրովսկու «Եկամտավոր պաշտոն» պիեսի թարգմանությունը, որ կատարել է Պերճ Պոռշյանը:

Ներկայումս Տուն-թանգարանը լրացվում է նոր էքսպոնատներով, որոնք վերաբերում են գրողի կյանքի վերջին շրջանին. միաժամանակ լայն աշխատանք է տարվում ձեռք բերելու Պոռշյանի կյանքին ու գրական գործունեությանը վերաբերող բազմապիսի էքսպոնատների:

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈ ՄՈՍԿՎԱՅԻՄ

Քաղաքական և Գիտական Գիտելիքներ Տարածող Համամիութենական Ընկերությունը մարտի 23-ին Մոսկվայում՝ Մոսկովական Հայաստանի Կուլտուրայի Տանը կազմակերպեց հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի մահվան 25-ամյակին նվիրված երեկո: Թանգարական ստեղծագործության

ժամանակակից գիտությունների գոկառ-պրոֆեսուոր Վ. Կիրապուտինը:

Համերգային բաժնում կատարվեցին թումանյանի ստեղծագործությունները: Թարգմանիչ բանաստեղծները Վ. Զլյագինցեան, Մ. Պետրովիչիս, Ս. Շերիֆիսկին, Յու. Վերլովսկին և ուրիշները կարգացին Թումանյանի բանաստեղծությունների թարգմանու-

թյանները և նրան նվիրված իրենց ստեղծագործությունները՝ Կովառությամբ Տան փոյսում բացվել է Թումանյանի կյանքին և ստեղծագործությանը

նվիրված ցուցանուններու, որտեղ ներկայացված են նաև մեծ բանաստեղծի այն ստեղծագործությունները, որոնք թարգմանված են ստեղծելու լեզվով:

## S. ԶՈՒԽԱՅՅԱՆԻ ՍԱՀՎԱՆ 50-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈ

Մարտի 22-ին Երևանի Պետական Կոնսերվատորիայի դաշտական տեղի ունեցավ Երեկո՝ նվիրված Հայ նշանավոր կոմպոզիտուր Տիգրան Չուխայյանի մանվան 50-ամյակին: Կոմպոզիտորի կյանքի և երաժշտական ստեղծագործության մասին զեկուցում կարդաց արվեստի վաստակավոր գործից, կոմպոզիտոր Ա. Տիգրանյանը:

Զեկուցումից հետո կայացալ համերգ, որ-

անց հանդես եկան ՍՍՌՄ ժողովրդական արտիստունի Հ. Դանիելյանը, ուսապուրիկայի ժողովրդական արտիստունի Շ. Տալյանը, Տ. Սաղանդարյանը և զաշնակա՞արունի Ա. Աղջոյանը, որոնք կատարեցին Հոկտեմբերի ստեղծագործություններից՝ «Արշակ Երկրորդ» օպերայից ու «Կարինե» օպերիտայից արիաներ, գուհաներ, և առանձին տեքստերի հիման վրա գրված սոմանոններ:

## ԵՐԵԿՈ, ՆՎԻՐՎԱԾ ՆԿԱՐԻՉ ԷԴԳԱՐ ՇԱՀՆԻՔ ՀԱՇԱՏԱԿԻՆ

Մարտի 22-ին Երևանի Նկարիչների Տանը Հայաստանի Կերպարվեստագետների Միությունը կազմակերպեց Երեկո՝ նվիրված Հայ ականավոր նկարիչ Եղիշը Շահնիքի հիշատակին: Նրա կյանքի և ստեղծագործությունների մասին զեկուցեց արվեստի գործից Ռ. Դրամյանը:

Զեկուցով նշեց, որ ապրելով և ստեղծագործելով Ֆրանսիայում (Փարիզում), Եղիշը Շահնիք մինչև վերջը հարապատ մնաց ունախուական արվեստի տրադիցիաներին: Հըմուտ վարպետությամբ և բարձր արվեստով կատարված նրա բազմաթիվ օֆորտներն ու

լիտոգրաֆիաները հակեցված են սոցիալական խորը բավարարությամբ՝ արտահայտելով դիմոկրատական արվեստի առաջավոր դաշտավայրը:

Զեկուցումից հետո Ֆրանսիայից Հայոցներք վերադած Հայ անվանի նկարիչ Ռ. Շիշմանյանը պատմեց իր հուշերը Եղիշը Շահնիքի մասին: Միաժամանակ նա ցուցադրեց է Շահնիքի իր հետ բերած մի քանի գործերը:

Կազմակերպված էր նաև մի փոքրիկ ցուցանուն Եղիշը Շահնիք օֆորտների ու լիտոգրաֆիաների լավագույն նմուշներից:

## ՆԿԱՐԻՉ ԱՐՇԱԿ ՖԵԹՎԱՅՅԱՆԻ ՍՏԵՂՄԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍ

Երևանի Պետական Պատկերասրահը պատրաստում է նկարիչ Արշակ Ֆեթվայյանի ստեղծագործությունների հետմահու ցուցանուններ: Ցուցադրվելու են 150 աշխատանքներ, որ նկարիչը կատարվ նվիրել է Սովորական Հայաստանի Պատկերասրահին: Մրանց

մեջ առանձնահատուկ արժեք է ներկայացնում միջնադարյան հայկական ճարուարականության Անիի հուշարձանների (XII դ.) շրանիների պատկերների մեծ սերիան: Այս սերիայի պատկերները արգունք են նկարչի 1904—1906 թվականներին Անիում կատարած աշխատանքների:

## ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Հայկական ՍՍԲ Գիտությունների Ակադեմիայի կանոնադարձությամբ Հայմանապվել է 1943 թվին: Նա ԱԼ Մյասնիկյանի անվան Հանրային Գրադարանից հետո մեր սեպական գրադարանում է գրադարանն է:

Այժմ գրադարանն ունի ավելի քան 271 հազար հատոր հայերեն, ուստեղեն ու այլ լեզուներով գեղարվեստական, քաղաքական, գիտական գրականություն և պարբերականներ: 1945 թվի Համեմատությամբ 1947 թվին գրականության փոնդն աճել է 5,5 անգամ:

Ամեն տարի Մոսկվայի Լենինի անվան, Լենինգրադի Սալտիկով-Շենգրինի անվան, Դինի, Բաբին, Թրիլիսիի, Խարկովի և Սովորական Միտիքյան բոլոր խոշորագույն գրադարաններից ստացվում են նոր լուս ընծայված գրքերի, ժուռանակների անվճար ու վճարվությամբ օրինակներ: Հարեւան եղբայրական ուսապուրիկանների գրադարանների հետ կատարվում է գրականության փոխանակում:

Գրադարանն ունի կոմպլեկտավորման, մշակման, բիբլիոգրաֆիայի և սպասարկ-

ման բաժիններ: Բացի այդ, Ակադեմիայի յուրաքանչյուր գիտա-հետազոտական ինստիտուտ, սեկտոր ունի իր հատուկ մասնա-

գիտական գրադարանը: Դրանցից Թիոլո-դիական ինստիտուտինը Միության առաջա-լոր դիտական դրակարաններից է:

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԻԼՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ

Վ. Մ. Մոլոտովի անվան երեանի Պետական Համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետը համարվում է համալսարանի ամենամեծ ֆակուլտետը: Մինչև 1936 թիվը այս ֆակուլտետը միացյալ էր պատմության ֆակուլտետի հետ: 1936 թիվը անշատվեցին և այն ժամանակ ուներ միայն մեկ բաժին՝ դրականության և լեզվի: Այնուհետև կաղաքակերպեցին և ավելացան նոր բաժիններ: Այժմ ֆիլոլոգիական ֆակուլտետն ունի Հայ

դրականության և լեզվի, Ռուս գրականության և լեզվի, Եվրոպական գրականության և լեզվաների, Արևելյան լեզվաների և Տրամաբանության բաժինները:

Ֆակուլտետը պատրաստում է ռեսպոնսիվիայի և նրա սահմաններից դուրս գտնվող ինստիտուտների, դպրոցների համար գրականության և լեզվի որակյալ դասատոմեր, ինչպես նաև գիտա-հետազոտական հաստատություններում աշխատողներ:

## ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՆՈՐ ՇԵՆՔԸ

Հայկական Պետական Դրամատիկ Թատրոնի նոր շենքի նախադիմի վրա ներկայումս աշխատում են ՍՍՌՄ Ճարտարապետության Ակադեմիայի իսկական անդամ Կ. Հալաբյանը և ՍՍՌՄ Ճարտարապետության Ակադեմիայի թղթակից-անդամ պրոֆ. Ս. Մաքրյանը:

Հստ նախադիմի դահլիճն ունենալու է 1200

տեղ: Բեմը ամբողջովին մեքենայացված է լինելու: Ենքի մի մասը հատկացվելու է թատերական թանգարանին, որի դահլիճները միացվելու են թատրոնի հանգստարանի հետ: Ենքի ճակատը զարդարվելու է հայ բեմի նշանավոր գործիչների՝ Աղամյանի, Սիրանովյանի, Արելյանի, Փափազյանի և ուղիղների քանդակներով:

## Ն Ո Ր Ի Ն Ս Ի Տ Ո Ւ Տ

Հայաստանի մայրաքաղաքում կազմակերպվում է առաջարձրագույն ուսումնական հաստատություն—օտար լեզվաների մանկավարժական ինստիտուտ: Ինստիտուտն ունենալու է անգիտական, քրանսիտական ու

գերմանական լեզվի բաժնամունք:

Առաջին ուսումնական տարրում ինստիտուտն ընդունելու է 150 ուսանող: Պարագմոններն սկսվելու են սույն տարվա հոկտեմբեր ամսի 1-ից:

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԶԵՐՆԱՐԿ

Հայկական ՍՍՌ Հուսավորության միահիմնարության դպրոցների գիտա-հետազոտական ինստիտուտը տպագրության է պատրաստում «Հայ դպրոցի և մանկավարժության պատմությունը» ձեռնարկը՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների և մանկավարժական ուսումնարանների ուսումնողների, ինչպես նաև ժողովրդական կրթության ցանցի աշխատողների համար:

Զերնարկը բաղկացած է երկու հատորից. առաջին հատորն ընդգրկում է Հայ դպրոցի պատմության 1800—1920, իսկ երկրորդ հատորը՝ 1920—1945 թվականների ժամանակաշրջանը:

«Հայ դպրոցի և մանկավարժության պատմությունը» ձեռնարկի վրա աշխատում են ռեսպոնսիվիայի լավագույն մանկավարժական ուժերը:

## ՄԵՆԵՐԳՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արվեստի Գործերի Վարչության ժողովրդական ստեղծագործության Տունը պատրաստում է Հայաստարակելու Հայ ժողովրդական միներգիների հատընտիր ժողո-

վածու ժողովածուի մեջ տեղ են գտնելու հայկական երաժշտության կլասիկների, ժամանակակից կոմպոզիտորների լավագույն մեներգիներն ու ժողովրդական մեներգությունները:

## ԴԱՆԹԵՒ „ԴԺՈԽՔԸ“ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

Հայպետհրատի Հրատարակությամբ լույս տեսավ իստալական մեծ բանաստեղծ Ալիքի Դանթեի և Աստվածային կատակերգությանը առաջին գիրքը՝ «Դժոխքը»: Բնադրից հայերենի թարգմանել է Արքուն Դանը (Տայեցի), իլլուստրացիաները պատկանում են Գրանսիհական նկարիչ Գյուստավ

Դորենին: Գրքի առաջաբանը գրել է արվեստագիտական գիտությունների դոկտոր Ա. Զիվելեցյանը: Մեկնաբանությունները խօսքագրել է Գիլուսգիական գիտությունների թեկնածու Վ. Թերզիբաշյանը:

Գրքի տիրածն է Գաղար օրինակ:

## ՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԿԼԱՍԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայպետհրատի ընթացիկ տարվա հրատարակչական պլանում զգալի տեղ է հատկացված հայ գեղարվեստական կլասիկ գրականության հրատարակմանը: Այս տարի սկիզբ է դրվում Ռաֆֆու երկերի ժողովածուի հրատարակմանը՝ տասը հատորից բաղկացած: Անցյալ տարվա տարեվերջում լույս տեսավ Ռաֆֆու «Կայծեր»-ը 10.000 տիրաժով, ընթացիկ տարում «Կայծեր»-ը

հրատարակվելու է նաև ոռուներեն լեզվով: Մուրացանի պատմվածքները նույնպես հրատարակվելու են ոռուներեն լեզվով:

Հայ կլասիկներից շքեղ հրատարակությամբ ընթացիկ տարում լույս են տեսնելու Հովհաննես Թումանյանի, Ղազարոս Աղայանի, Ալետիք Խաչակրյանի, Նար-Դոսի երկերի ժողովածուները և Վահան Տերյանի ու Հովհաննես Հովհաննիսյանի երկերի մեկ հատորյակները:

## ՀԵՐՈՍՈՒՃԻ ՄԱՅՐԵՐ

Հայկական ՍՍՌ-ի քաղաքներում և գյուղերում տասը և ավելի երեխաներ ծնելու, աճեցնելու և դաստիարակելու համար ՍՍՌ-ը

Գերագույն Սովետի Նախագահության հրամանագրերով մինչև այժմ «Հերոսուճի մայր» կոչման են արժանացել 426 կին:

## ՍԱՆԱՏՈՐԻԱ ՍԵՎԱՆԻ ԿՈՉՈՒՄ

ՀԱՄԿԻ-ի Հայաստանի Հանդստյան Տնիկի և Սանատորիաների Վարչությունը այս տարի Սևանի կղզում բացում է սանատորիա 160 մահճակալով:

Սանատորիայի համար կառուցվում է առանձին նախամատույց, որն ունենալու է կամարակապ մրտաք, տաղավար և ամեն տեսակի հարմարություններ՝ հիվանդների կուլտուրական սպասարկման համար:

Այժմ աշխատանքներ են կատարվում կինո-համերգային էստրադա, աշտարակ-փառու և կղզու գագաթին խոշոր տաղավար կառուցելու ուղղությամբ:

Սևանի սանատորիան ունենալու է ֆիզիոթերապևտիկ, ռենտգենյան կարիքնետներ, ծովային լողարաններ և այլ հարմարություններ: Սանատորիան ձեռք է բերել նաև իր սեփական փոխադրական միջոցները:

Իր բարձր լեռնային կլիմայով, մաքուր ծովային օդով, արևային շերմությամբ, շըրային սպորտի հետ միասին, Սևանը գառնալու է Հայաստանի հիանալի կուրորտներց մեջ:

Այս տարի Սևանում բուժվելու հն մոտ 800 մարդ:

## ՆՈՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՑԱՆ

Ազիգրեկովի շրջանում այս տարի կակամի Ազադեկի հիգրոէլեկտրակայանի շինարարությունը, Ազադեկի հիգրոէլեկտրակայանը էլեկտրահանքիս է մատակարարելու շրջ-

կենտրոնին: Հիգրոէլեկտրակայանի շինարարությունն ավարտվելու է նոր հնագամյակի վերջում:

## ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ

Երևանում նախատեսված է կառուցել Ե-լեկտրական լամպաների գործարան:

Դորժիությունը կամաց առաջնահանձնական է գործարանի առաջին լեռթղ շահագործման հանձնել 1950 թվին:

## ՌԱԴԻՈԸՆԴՈՒՆԻՉՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Մոտ ժամանակներս Երևանում կսկսվի գետեկտորային ռադիոընդունիչների և բնակարանային բարձրախոսների գործարանի շինարարությունը:

1948 թվին արդեն կարտագրվի տասնյակ հազարներից ավելի գետեկտորային ռադիոընդունիչներ և բնակարանային բարձրախոսներ:

## ՊԱՆՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Սպիտակի շրջանում կառուցվում է նոր պանրագործարան, որն իր կարողությամբ երկրորդը կլինի ռեսպուրլիկայում: Շինա-

րարությունը ավարտվելու է 1948 թվի վերաբանագործարան, որն իր կարողությամբ շին:

## ԷԶՄԻԱԾՆԻ ՄԵԽԱՆԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Ավարտվելու վրա են կառուցվող մեխանիկական գործարանի շինարարական աշխատանքները: Գործարանն ունենալու է ավելի քան 7 ցիս և արտադրելու է զուլատնեսական գործիքների ու մեքենաների զանազան մասեր, մահմակալներ և այլն:

Գործարանի շրջակայթում կառուցվել են բնակելի շենքեր մասնագետների ու բանվորների համար: Նորակառուց գործարանի համար այժմյանից հավաքագրվում ու որակավորվում են մասնագետ կադեր՝ փականագործներ, խառատներ, և այլ աշխատողներ:

## ԿՈՆՍԵՐՎԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

<sup>2</sup> ՇԱՄԾԱԴԻՆ. — Շրջանի գյուղերը հարուստ են բազմազան մրգատու այգիներով: Տեղական հոմքի բաղայի հիման վրա շրջկենտրոնում կառուցվում է կոնսերվի գործարան, որը տարեկան պետք է արտադրի ավելի քան 400 հազար տուփ պահածու:

Գործարանի կառուցման աշխատանքը կավարտվի և այն շահագործման կհանձնվի այս տարիվ օգոստոս ամսին:

\*\*\*

Լենինականի Մարի կոմբինատին կից ներկայում կառուցվում է Կոնսերվի գործարան՝ ընտիր պահածոներ պատրաստելու համար: Գործարանի կառուցումը պետք է ավարտվի 1948 թվի առաջին եռամյակում և բրորդ եռամյակում նա պետք է երկրին տա բարձրորակ պահածուներ:

Գետագյուղ պահածոների գործարանը կրնպանի իր արտադրած պահածոների տեսակները և կալիւրցնի նրանց քանակը:

Հետագայում պահածոների գործարանը կրնպանի պահածոների գործարանը կամաց առաջնական ուղարկություն է դարձվում անտառապատման աշխատանքներին: Մինչև 1950 թվականը նախատեսված է տընկել մեկ միլիոն շորս հարցուր հազար ծառ, որից 455 հազարը տնկվելու է այս դարնա-

## ԷԶՄԻԱԾՆԻ ՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՇՐՋԿԵՆՏՐՈՆԻ ԱՆՏԱՌԱՏՈՒՄԸ

Այս տարի էջմիածնում ու շրջանի գյուղերում առանձնակի ուշադրություն է դարձվում անտառապատման աշխատանքներին: Մինչև 1950 թվականը նախատեսված է տընկել մեկ միլիոն շորս հարցուր հազար ծառ, որից 455 հազարը տնկվելու է այս դարնա-

նը: Շրջանի հինգ կոլխոզներում կազմակերպվում են տնկարաններ: Շրջանի կոլխոզներից մեկն արդեն հիմնել է իր տնկարանը, որն այս դարնանը տալու է 60<sup>։</sup> Հազար տնկի մեկ հեկտար տարածություն անտառապատելու համար:

## ԱԼՎԵՐԴԻՆ ԱՅՍՈՐ

Նախառելուցին Ալավերդին հայտնի էր միայն իր պղնձի հանքերով, որ բարբարոսական ձևով շահագործում էին օտարերկըրբայական կապիտալիստները։ Մանր էր բանվորների գրությունը, նրանք անլուր զրկանքների էին ենթարկվում, ապրում էին մութ և խավար խրճիթներում՝ դուրկ առողջապահա-

ու միջնակարգ և 6 տարրական կպըցներ, որտեղ սովորում են 9.000 երեխա։ Շրջանում գործում են հինգ հիվանդանոց՝ 105 մահճակալով, մեկ պոլիկլինիկա, 8 բուժկայան, 3 առկայան, 7 բուժական կետեր։ Նոր հիվանդանոց է կառուցվում Լորուս գյուղում։ Շրջանն ունի 30 ա-



Ալավերդի, մի տեսարան

կան ամնատարբական հարմարություններից։ Ալավերդին իր հետամնացությամբ առանձնապնա չէր տարբերվում իր շրջակա գյուղերից։

Այժմ անճանաչելիորեն փոխվել է Ալավերդին իր շրջակա գյուղերի հետ միասին։ Շրջանում էլեկտրիֆիկացման են ենթարկվել 18 գյուղ։ Միկրոգյուղ են կառուցվել Մարց և Անիձոր գյուղերում։

Շրջանում գործում են 8 միջնակարգ, 23

կումբ, մեկ կուլտուրայի տուն, թանգարան։ Ալավերդու գյուղերն ունեն իրենց սեփական կինո-դահլիճները։

Շրջկենտրոնում 1945 թվին երաժշտական դպրոց է կազմակերպվել։ Կազմակերպման օրից սկսած մինչեւ այժմ դպրոցում սովորել են շրջկենտրոնի աշխատավորների 60-ից ավելի երեխաներ։ Դպրոցն ունի ջութակի, թավջումակի, զաշնամուրի դասարաններ, որոնք ապահովված են անհրաժեշտ երաժշտական գործիքներով։

## ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒՄ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թուսաբանական Այգու և թուսաբանական ինստիտուտի աշխատողները այգում

ուսումնասիրում են Հայաստանում շաճող բույսերի զարգացումը և գիտականորեն ստեղծում են նախապայմաններ մերձարևա-

դարձային և այլ կովտուրաների աճեցման համար:

Տարեց-տարի այդին հարստանում է նոր տեսակի բույսերով, որոնք բերվում են Սովետական Միության տարբեր վայրերից: Այժմ այդում աճում են ավելի քան երեք հա-

զար տեսակի բույսեր ու ծառեր:

Այդու աշխատանքները ավելի լավ կազմակերպելու համար այդու դիրքեկցիան վերջիրս կապ է հաստատել հարեան եղայրական ուսուցչության համար այդում աճում են ավելի քան երեք հա-

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՒԽՆԵՐԸ

Համար երկների պինեկործների բազմիցս կատարած փորձերը, իրենց մոտ ստանալու դինու արժեքալոր, առանձնահատուկ անուշահությությամբ զանազանվող խերես տեսակը, ոտքրաբար ավարտվել են անհաջողությամբ: Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գինեգործական և խաղողադրժական ինստիտուտը խաղողի տեղական տեսակների գինու դրոժների երկարաւառ ուսումնասիրությունից հետո գտավ, որ Հայաստանում այդպիսի գինի կարելի է ստանալ: Այդպիսի գինու համար պիտանի են խաղողի ռոսկեհատը և ճնշելար տեսակները, որոնք մեծ քանակությամբ ստացվում են Աշտարակի շրջանում: Ներկայումս բաց է թողնված արդեն հայկական խերեսը «Աշտարակ» անվան տակ: Կառուցվում է խերես գինու գործարանը, որը տարեկան

տալու է 150 հազար դեկալիտր հնացրած խերես—ընթարակա:

Մեծ աշխատանք է տարվել նմանապես Հայաստանում մուսկատ տեսակի գինիների պատրաստման ուղղությամբ. այդ տեսակի գինիները առաջ պատրաստվում էին միայն Ղրիմում, Բազմաթիվ փորձերից հետո Հաշողվել է ստանալ հայկական վարդագույն և սպիտակ մուսկատ տեսակի գերազանց որակի գինիները:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գինեգործության և խաղողագործության ինստիտուտը վերջերս մշակել է սեղանի գինու նոր տեսակ—«Նեխտարենիս»: Այս գինին օժտված է հատուկ անուշահությունումը և հանձնարարվում է որպես բուժիչ:

## ՀԱՅԱՀԱՏԿԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈՐՁԱԴԱՏՏ

Էջմիածնի շրջանի հացահատիկային տեսակների փորձադաշտը իր գործության տասը տարիների ընթացքում զգալի աշխատանք է կատարել հացահատիկին նորանոր տեսակներ զարգացնելու ու բազմացնելու ուղղությամբ: Տարիների փորձարկման շնորհիվ հայտաբերվել է կարմիր ցորենի նոր տեսակը, որը իր բիոլոգիական հատկանիշներով՝ կանգունությամբ, սիմացկունությամբ, բարձր բերքով ու որակով գերազանցում է մինչև

այժմ շրջանում ցանկող ցորենի պարզած տեսակին:

Երկրորդ տարին է ինչ այդ նոր սերմը լայն գործածության մեջ են դրել երկու կոլխոզներ և այժմ նրանք ամբողջ ցանքը կատարում են դրանով ու հասնում բարձր բերքատվության:

Այս տարվանից շրջանի 8-ից ավելի կոլխոզներ արդեն շրջայնացնում են ցորենի այդ նոր տեսակը:

